

1.6. Մասնավորեցում

2010թ. հունվարի 1-ի դրությամբ մասնավորեցվել 1178 օբյեկտ և կազմակերպություն (ընկերություն), ընդ որում՝ 1053 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտներ ու վարձակալված տարածքներ, 70 կազմակերպություն և 55 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ: Նշված օբյեկտների մասնավորեցումից մուտքերը կազմել են 1781.1 մլն դրամ, որից 28.4 մլն դրամը՝ 2009թ.: Բյուջե մուտքագրված գումարների գերակշռող մասը բաժին է ընկնում ընկերությունների մասնավորեցումից մուտքերին՝ 56.4 տոկոսը և կազմում է 1004.8 մլն դրամ:

Մասնավորեցման ընթացքում պետական և համայնքների բյուջեներ կատարված նուծումների մասին

	Ընդամենը	1995-2004թթ	2005թ.	2006թ.	2007 թ.	2008թ.#	/մլն դրամ/ 2009թ.
Ընդամենը	1781.1	1118.7	267.2	251.8	49.2	65.8	28.4
<i>այդ թվում՝</i>							
Կազմակերպություններ (ընկերություն)	1004.8	593.3	196.7	183.9	13.6	13.1	4.2
Կազմակերպությունների (ընկերություն) գույքի կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ	152.3	80.5	20.8	14.5	4.6	25.7	6.2
«Փոքր», կիսավեր ու վարձակալված տարածքներ	589.3	441.3	35.9	38.0	31.0	25.9	17.2
Անավարտ շինարարության օբյեկտներ	34.7	3.6	13.8	15.4	-	1.1	0.8

1.6.1. «Փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցում

2010թ. հունվարի 1-ի դրությամբ մասնավորեցվել է «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների 1053 օբյեկտ կամ կառավարության ծրագրով մասնավորեցման հաստատված օբյեկտների 98.7 տոկոսը:

Մասնավորեցված օբյեկտները 2010թ. հունվարի 1-ի դրությամբ

Ընդամենը	Օբյեկտների քանակն ըստ ծրագրի	Գնահատված օբյեկտների		Մասնավորեցված օբյեկտների		Մասնավորեցման կատարողականը, %
		քանակը	արժեքը (մլն դրամ)	քանակը	արժեքը (մլն դրամ)	
Ընդամենը	1067	1109	1112.5	1053	888.6	98.7
<i>այդ թվում՝</i>						
«Փոքր» օբյեկտներ	294	299	188.3	290	187.2	98.6
<i>որից՝</i>						
առևտուր	162	167	136.8	161	136.0	99.4
հանրային սնունդ	19	19	12.3	18	12.2	94.7
կենցաղսպասարկում	113	113	39.2	111	39.0	98.2
Անավարտ շինարարության օբյեկտներ	13	14	51.1	13	45.6	100.0
Վարձակալված տարածքներ	252	252	171.0	252	171.0	100.0
Համայնք	351	369	355.4	344	194.0	98.0
Կիսավեր օբյեկտներ	124	141	204.0	122	161.8	98.4
Այլ	33	34	142.7	32	129.0	97.0

Մասնավորեցման կատարողականի առավել ցածր մակարդակ դիտվել է այլ օբյեկտների և համայնքի գույքի մասնավորեցման գործընթացում՝ 97.0 և 98.0 տոկոս համապատասխանաբար:

Հանրապետությունում «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցված 1053 օբյեկտներից 501-ը կամ 47.6 տոկոսը մասնավորեցվել է վարձակալների կողմից, 208-ը կամ 19.8 տոկոսը՝ աճուրդի միջոցով, 168-ը կամ 15.9 տոկոսը՝ աշխատանքային կոլեկտիվների կողմից, 145-ը կամ 13.8 տոկոսը՝ ուղղակի վաճառվել է նախօրոք հայտնի գնորդին, 30-ը կամ 2.8 տոկոսը՝ ուղղակի անհատույց տրամադրման ձևով և 1-ը կամ 0.1 տոկոսը՝ նրցութային վաճառքի ձևով:


Մասնավորեցման ընթացքն ըստ մասնավորեցման ձևերի
2010թ. հունվարի 1-ի դրությամբ

	Ընդամենը		Աշխատանքային կողմերի		Վարձակալին		Ուղղակի վաճառք նախօրոք հայտնի գնորդին		Ուղղակի անհատույց տրամադրում		Աճուրդ		Մրցութային վաճառք	
	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)	քանակ	արժեք (մլն դրամ)
Ընդամենը	1053	888.6	168	70.9	501	283.8	145	279.7	30	143.7	208	105.7	1	4.8
այդ թվում՝														
«Փոքր» օբյեկտներ որից՝	290	187.2	168	70.9	-	-	16	44.5	1	4.9	105	66.9	-	-
տնտեսող	161	136.0	84	44.9	-	-	8	37.9	1	4.9	68	48.3	-	-
հանրային սնունդ	18	12.2	8	5.5	-	-	2	2.4	-	-	8	4.3	-	-
կենցաղապասարկում	111	39.0	76	20.5	-	-	6	4.2	-	-	29	14.3	-	-
Անավարտ շինարարության օբյեկտներ Վարձակալված տարածքներ	13	45.6	-	-	-	-	7	39.4	1	3.9	5	2.3	-	-
Համայնք	252	171.0	-	-	240	153.0	3	12.1	1	1.2	8	4.7	-	-
Կիսավեր օբյեկտներ	344	194.0	-	-	261	130.8	56	52.0	7	4.3	20	6.9	-	-
Այլ	122	161.8	-	-	-	-	43	79.7	11	57.4	68	24.7	-	-
	32	129.0	-	-	-	-	20	52.0	9	72.0	2	0.2	1	4.8

«Փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների ու վարձակալված տարածքների մասնավորեցումն ըստ շրջանների 2010թ. հունվարի 1-ի դրությամբ

Շրջաններ	Օբյեկտների քանակն ըստ ծրագրի	Գնահատված օբյեկտների քանակը	Մասնավորեցված օբյեկտների քանակը	Սեփականաշնորհման ծրագրի կատարողականը, %
Ընդամենը	1067	1109	1053	98.7
ք.Ստեփանակերտ	643	652	636	98.9
Ասկերան	70	72	69	98.6
Հաղրուք	35	40	35	100.0
Մարտակերտ	107	111	104	97.2
Մարտունի	108	117	106	98.1
Շուշի	104	117	103	99.0

Մասնավորեցված օբյեկտների կառուցվածքն ըստ շրջանների 2010թ. հունվարի 1-ի դրությամբ



Ինչպես նկատվում է աղյուսակում բերված տվյալներից և գծապատկերից, Ստեփանակերտ քաղաքը առաջնային դիրք է զբաղեցնում մասնավորեցված օբյեկտների քանակով՝ 60.4 տոկոս, իսկ մասնավորեցման կատարողականի առումով Հաղրուքի շրջանը՝ 100.0 տոկոս:

Հանրապետությունում մասնավորեցված 1053 «փոքր», կիսավեր և անավարտ շինարարության օբյեկտների արժեքը կազմել է 888.6 մլն դրամ, որից 2010թ. հունվարի 1-ի դրությամբ պետական և համայնքների բյուջեներ մուծվել են 624.0 մլն դրամը կամ ընդհանուր արժեքի 70.2 տոկոսը: Մասնավորեցված օբյեկտներից 997-ի գծով մուծումները լրիվ կատարվել են:

1.6.2. Կազմակերպությունների (ընկերությունների) մասնավորեցում

2010թ. հունվարի 1-ի դրությամբ մասնավորեցման ենթակա 103 կազմակերպություններից մասնավորեցվել են 70-ը, որից 22.9 տոկոսը կամ 16-ը՝ շինարարությունում, 15.7 տոկոսը կամ 11-ը՝ սննդի արդյունաբերությունում:

Մասնավորեցված կազմակերպություններից 38-ը մասնավորեցվել է ուղղակի վաճառքով, 18-ը՝ մրցութային վաճառքով, 14-ը՝ անհատույց կարգով:

Կազմակերպությունների (ընկերությունների) մասնավորեցման ընթացքը

Ճյուղեր	Նախատեսված է ծրագրով	Գնահատված է		Մասնավորեցված է		Մուծված է պետական բյուջե, մլն դրամ	
		քանակը	արժեքը մլն դրամ	քանակը	արժեքը մլն դրամ	ընդամենը	այդ թվում՝ 2009թ.
Ընդամենը	103	85	4096.8	70	3519.5	1004.8	4.2
այդ թվում՝							
Էներգետիկա	4	1	6.9	1	6.9	2.1	-
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	4	4	381.8	2	64.8	26.0	-
Թեթև արդյունաբերություն	7	6	440.9	6	440.9	139.3	0.8
Սննդի արդյունաբերություն	12	12	987.5	11	985.6	337.8	-
Շինարարություն	18	17	652.7	16	649.4	175.9	-
Շինանյութերի արտադրություն	4	3	696.7	3	696.7	160.8	2.3
Գյուղատնտեսություն	3	3	71.0	2	66.9	1.1	-
Ճանապարհաշինություն և շահագործում	5	5	126.5	4	95.1	25.5	-
Ավտոմոբիլային տրանսպորտ	6	6	116.5	1	64.7	-	-
ՆՏՄ	10	7	175.6	6	140.6	44.1	-
Կոմունալ տնտեսություն	14	6	101.1	6	101.1	16.9	-
Առողջապահություն	3	3	49.5	2	29.1	16.7	-
Զբոսաշրջություն	1	1	5.6	1	5.6	4.3	-
Այլ ճյուղեր	12	11	284.5	9	172.1	54.3	1.1

Կազմակերպությունների մասնավորեցումից մուտքերը կազմել են 1004.8 մլն դրամ կամ մասնավորեցված օբյեկտների արժեքի 28.5 տոկոսը, ընդ որում՝ 2009թ. մուծվել է 4.2 մլն դրամ:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում մասնավորեցվել է 55 կազմակերպությունների կազմից առանձնացված կառուցվածքային միավորներ, որից 14-ը՝ թեթև արդյունաբերության, 9-ը՝ էլեկտրատեխնիկական արդյունաբերության, 5-ը՝ գյուղատնտեսության, 4-ը՝ սննդի արդյունաբերության, 3-ական՝ շինանյութերի արտադրության, կոմունալ տնտեսության, 2-ական՝ ճանապարհաշինության և շահագործման, ավտոմոբիլային տրանսպորտի, 1-ական՝ առողջապահության, ՆՏՄ, էներգետիկայի և 10-ը՝ այլ ճյուղերում:

Մասնավորեցված միավորների արժեքը կազմել է 491.2 մլն դրամ, մուծումները՝ 152.3 մլն դրամ, ընդ որում 2009թ.՝ 6.2 մլն դրամ:

Կազմակերպությունների (ընկերությունների) կազմից առանձնացված միավորների մասնավորեցման ընթացքը

Ճյուղեր	Գնահատված է		Մասնավորեցված է		Մուծված է պետական և համայնքային բյուջե, մլն դրամ	
	քանակը	արժեքը մլն դրամ	քանակը	արժեքը մլն դրամ	ընդամենը	այդ թվում՝ 2009թ.
Ընդամենը	59	505.4	55	491.2	152.3	6.2
այդ թվում՝						
Էներգետիկա	1	8.2	1	8.2	2.0	2.0
Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն	9	139.6	9	139.6	31.4	-
Թեթև արդյունաբերություն	14	61.8	14	61.8	24.0	1.2
Սննդի արդյունաբերություն	5	8.1	4	7.7	5.0	-
Շինանյութերի արտադրություն	3	86.0	3	86.0	35.2	-
Գյուղատնտեսություն	5	81.8	5	81.8	1.8	-
Ճանապարհաշինություն և շահագործում	2	15.6	2	15.6	7.2	-
ՆՏՄ	2	4.3	1	2.4	2.4	-
Ավտոմոբիլային տրանսպորտ	2	17.5	2	17.5	6.3	-
Առողջապահություն	1	0.0	1	0.0	0.0	-
Կոմունալ տնտեսություն	4	30.5	3	22.0	22.1	3.0
Այլ ճյուղեր	11	52.0	10	48.6	14.9	-